ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

183-19

«25» հոկտեմբերի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 35 և հոկտեմբերի 22-ի թիվ 36 որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ * ՎԱՇԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ * 06910489

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » հոկտեմբերի 2019 թվականի N 35

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 35- րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 57-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագիծը՝

Որոշում եմ.

1. Օրինականացնել Վահագնի համայնքի 06-103-0061-0002 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված մակերեսով քաղաքացի Սուսաննա Սերյոժայի Սարդարյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները՝ արտադրական նշանակության պահեստը՝22,35 քառ. մետր,օժանդակ շինությունը՝

8,07 քառ. մետր և սանհանգույցը՝ 2,5 քառ. մետր ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գյուղատնտեսական նշանակության 0,013826 հա մակերեսով հողամասը, դրանց նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Վահագնի համայնքի սեփականության իրավունքը:

2. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձին՝ Սուսաննա Սերյոժայի Սարդարյանին կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

5. 5-օրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Վահագնի, (0322) 69537, vahagni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2019թվականի N 36

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-103-0007-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայկ Վարդումյանի դիմումը.

Որոշում եմ

1. 06-103-0007-0009 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե գ. Վահագնի 6-րդ փողոց 37:

2. Որոշումը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի Վանաձորի ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ